ՈՒՂԵՑՈՒՅՑ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

«Պատմաբանասիրական հանդես»-ի էջերում լուսաբանվում են հայ ժողովրդի պատմության, գրականության, լեզվի, արվեստի ու մշակույթի, փիլիսոփայության հարցերը, պատմագրության, ընդհանուր բանասիրության և հայագիտության տեսական խնդիրները, հայ ժողովրդի քաղաքական, տնտեսական և մշակութային կապերը մյուս ժողովուրդների հետ:

Հանդեսն ունի հոդվածների, հաղորդումների, քննարկման ու բանավեճի, հրապարակումների, գրախոսության, մեր երախտավորները, մեր հոբելյարները, գիտական կյանք, լրատու բաժիններ: Հոդվածները տպագրվում են հայերեն և ռուսերեն՝ համապատասխան ամփոփումներով, անվճար:

Պարբերականը լույս է տեսնում 4 ամիսը մեկ անգամ, տարեկան 3 համար, յուրաքանչյուր համարի ծավալը 20 տպ. մամուլ (320 էջ):

Հանդեսի պաշտոնական կայքէջը՝ http://academhistory.am/hy *պատմաբանասիրական-հանդես*.html

Հանդեսի էլեկտրոնային հասցեն՝ patmhandes@rambler.ru, patmhandes@yahoo.com

ՀՈԴՎԱԾԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

1. Հոդվածի ծավալը պետք է լինի մինչև 15 էջ (ավելի մեծ ծավալը՝ խմբագրության որոշմամբ), տեքստի լայնությունը՝ 12.5 սմ, երկարությունը՝ 21 սմ, միջտողային տարածությունը At least՝ *13:*

2. Հայերեն տեքստը «Grqee Nor» *տառատեսակով՝ շեղ (italic), ընդգծված տեքստը (բառը)՝ ուղիղ, 12 տառաչափով, ռուսերենը՝* «Times New Roman»՝ *11.5:*

3. Հոդվածի վերնագիրը պետք է լինի «Arial Armenia» *տառատեսակով,* ՄԵԾԱՏԱՌԵՐՈՎ *(հայերենի չափը 12, ռուսերենինը՝ 11), դրվում է կենտրոնում, իսկ դրա ներքևում՝ հեղինակի անուն-ազգանունը՝* ՄԵԾԱՏԱՌԵՐՈՎ *(հայերենը՝* «Grqee Nor» *տառատեսակով, չափը՝ 11, ռուսերենը՝* «Times New Roman»*-ով, չափը՝ 10):*

4. Հաջորդ տողում գրվում են «Բանալի բառեր»-ը՝ առնվազն 10 բառ կամ բառակապակցություններ (ուղիղ):

5. Հոդվածի վերջում տրվող ամփոփումները պետք է ունենան տեքստի սեղմ բովանդակությունը (կես էջի չափով կամ 6–7 նախադասությամբ): Եթե հոդվածը հայերեն է, ապա ամփոփումները պետք է լինեն ռուսերեն ու անգլերեն, իսկ եթե ռուսերեն է՝ հայերեն և անգլերեն: Հայերենի ու անգլերենի տառաչափը 11.5, ռուսերենինը՝ 11:

6. Ամփոփումների տեքստից առաջ պետք է ՄԵԾԱՏԱՌԵՐՈՎ *գրել հոդվածի վերնագիրը (տառաչափը՝ 11), ներքևում հեղինակի անուն-*

ազգանունը (կենտրոնում) և ՄԵԾԱՏԱՌԵՐՈՎ (տառաչափը՝ 10): Հաջորդ տողում՝ կենտրոնում, գրվում են համապատասխանաբար՝ «Ամփոփում», «Резюме», «Summary» բառերը ցրիվ, տառաչափը՝ 10: Յուրաքանչյուր ամփոփման տեքստից առաջ գրվում են համապատասխան լեզվով «Բանալի բառեր»-ը, իսկ տառաչափը՝ ամփոփման տեքստի տառաչափով: Բոլոր լեզուներով տրվող «Բանալի բառեր»-ը պետք է լինեն նույնական:

7. Հոդվածի տեքստի վերջում գրվում են հեղինակի (հեղինակների) մասին հակիրճ տեղեկություններ՝ գիտական աստիճանը, աշխատավայրը, գիտական հետաքրքրությունների ոլորտը, հրատարակված աշխատանքների քանակը: Որից հետո գրվում է հոդվածի օգտագործված գրականության ցանկը՝ լատինատառ տառադարձմամբ (այբբենական կարգով):

8. Ռուսերեն ամփոփումից հետո ռուսերենով գրվում է հեղինակի մասին տեղեկությունը, իսկ անգլերենից հետո՝ անգլերենով:

ՀՂՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

ա) Հղումների տառաչափը. հայերենը՝ 11, ռուսերենը՝ 10.5, այլ լեզուներով՝ 11:

բ) Գրքի վրա հղման դեպքում գրվում է հեղինակի անվան սկզբնատառը, ազգանունը՝ ամբողջությամբ և ցրիվ, որից հետո գրվում է միջակետ, այնուհետև՝ մեծատառով գրքի վերնագիրն առանց չակերտների, ստորակետով՝ հրատարակության վայրը, թիվը, էջը:

գ) Ժողովածուների դեպքում նախ նշվում է օգտագործված հոդվածի վերնագիրը, դրվում է միջակետ ու անջատման գիծ, ապա գրվում է ժողովածուի վերնագիրը, խմբագրի կամ կազմողի տվյալները, հրատարակության վայրը, թիվը, էջը:

դ) Հղված ամսագրերի դեպքում տրվում է հոդվածի հեղինակի անուն-ազգանունը, վերնագիրը, այնուհետև դրվում է միջակետ ու անջատման գիծ, չակերտների մեջ նշվում է ամսագրի անվանումը, հրատարակության վայրը, թիվը, համարը, էջը: Թերթերի դեպքում չակերտների մեջ նշվում է թերթի անունը, այնուհետև՝ փակագծում հրատարակության վայրը, որից հետո՝ ամսաթիվը (օրինակ՝ 01. II. 1998): Վերը նշվածը վերաբերում է նաև ռուսերեն ու այլ լեզուներով հղումներին:

դ) Կայքերին տրվող հղումների դեպքում գրվում է հոդվածի կամ հոդվածի հեղինակի տվյալները և վերնագիրը, ապա դրվում է միջակետ ու անջատման գիծ, նշվում՝ կայքի հասցեն:

Հոդվածները գրախոսվում են, մերժման դեպքում չեն վերադարձվում: